

րայով) և վերագործը, որ կատարում էր Վովկասի բժշկական վարչութեան յանձնարարութեամբ: Այդ նկարագրութեան մէջ երևում է շատ մեծ նկատելիւ ընդունակութիւն, սուր գիտողութիւններ զանազան բնատրութիւնների և հետաքրքրաշարժ աղագորական և հնագիտական տեղեկութիւններ 1)»

«Լուամայ»ի մէջ իբր յաւելուած տրւում է Տուրգենևի «Հայրեր և որդիներ» վէպը և Ռուսոյի «Էմիլը», իսկ հանդիսի մէջ տպագրւում է Փուլդայի «Հերոստրատ» ողբերգութեան չափածոյ թարգմանութիւնը:

Առհասարակ «Լուաման» տալիս է յուրջ և բնութեցանութեան համար կատարելագէտ մատչելի նիւթ՝ թէ ինքնուրոյն և թէ թարգմանական: Երկու հայ հանդէսներն էլ սիրով տրւապարում են ժամանակակից ուսու գրողների՝ Չեխովի, Գոյրկու, Անդրէեի, Տոլստոյի և այլն թարգմանութիւնները:

«ԼՈՒՄԱՅ» ՆՈՒԻՐՈՂՆԵՐ

1. Մեծ. պ. Շիկողայոս Բայսողոլեանցը 2 օրինակ «Լուամայ» ստորագրուելով 1904 թ. մի օրինակը թողել է խմբագրութեանս տնօրինութեան ի յիշատակ իւր հանգ. ծնողի: Որոշեցինք ուղարկել Վաղիկավազի հասարակական գրադարանին:

2. Սիմֆէրոպոլից մեծ. պ. Միքայէլ Ալեանակին ստորագրուելով 1904 թ. 2 օր. «Լուամայ», մի օրինակը նուիրում է Արմենակի հայոց ղալոցին նորոգ հանգուցեալ տիկին Շոխսաբեղ Ալեանակիի յիշատակին պսակի փոխարէն:

Հետևեալ համարից սկսած կսկսենք տրւալել «Լուամայ»-ում մեր աշխատակից պ. Մուրացանի նոր պատմական վէպը «ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑԻ»:

1) «Յիշողութիւնների հեղինակը, որի գրական գործունէութիւնը սկսւում է 60-ական թուերից, յայտնի է որպէս ապագորական, տեղագրական և ժողովրդի նիստ ու կաց նկարագրող, ժողովրդական երգերի, հէքիաթների, առածների և այլն ժողովող: